



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

Թիւ 26564
Նոյեմբեր 26, 1979

Հոգեշնորհ
Տ. Վազգէն ծ. Վրդ. Քէշիշեան
Հովհան Ս. Արքորդութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Թորոնթօ.

Առաջարկ կը յայտնենք թէ համայնքի պատգամաւորներուն
պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն
կատարէք նոր պատգամաւորներուն եւ անոնց անձնափոխանորդներուն
համար, Թեմական Կանոնադրութեան 14-ր, եւ 54 յօդուածներուն
համաձայն:

Կը յանձնարարենք որ ձեր նորընտիր պատգամաւորներուն աս-
նունները եւ հասցեները Առաջնորդարան ղրկէք, ամենէն ուշը
Փետրուար ամսուան սկիզբը, որպէս զի կարելի ԸԼԼայ զիրենք
Թեմական Պատգամաւորական ժողովին հրաւիրել, որ տեղի պիտի
ունենայ Մայիս 29էն 31, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրե-
րը, Ուաշինգթոնի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ:

Կը թելադրենք որ նորընտիր պատգամաւորներուն ինքնութիւ-
նը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովհանին, ծխական Խորհուրդի
Առենապետին եւ Ասենադպիրին կողմէ սառագրուած Առաջնորդա-
րան ղրկէք առաջին պատեհութեամբ:

Սիրոյ ողջունիւ

Թորոյ Արքական Ժու

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ